

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՆԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շար. տես Քաղմովէպ 1980, էջ 102)

Ո՛ւր է գմբեթաւոր Եկեղեցւոյ հայրենիքը:

Քրիստոնէական ճարտարապետութեան ստեղծած նորութիւնն է գմբեթաւոր եկեղեցիներու ոճը, որ Ե դարէն յառաջ՝ գոյութիւն ունեցած է նաև այն աշխարհներու մէջ որ քան զՀայաստան աւելի զարգացած և յառաջադէմ դատուած են. զոր օրինակ Պարսկաստան, Ասորիք, Բիւզանդիոն և Հռոմ: Յուստիանոսի դարէն ի վեր աւանդաբար եկած էր այն զաղափարը՝ թէ գմբեթաւոր եկեղեցիներ Բիւզանդական արուեստի ստեղծագործութիւնն էին, և անկից տարածուել է Ֆրանսական, Գերման և Սկանտինաւեան երկիրներն: Անցած դարու երկու ֆրանսացի ճարտարապետներ վոլիւէ և վիոլլէ—Լը Դիւք մանրագնին հմտութեամբ ուսումնասիրեցին արեւելքի հին յիշատակներն, զարմանագործ կոթողներ անցեալ քաղաքակրթութեան, յորոց օգտուել է արեւմուտք, քան թէ փոխադարձը: Վոկիւէ մանրամասն նկարագրած է հեթանոս և քրիստոնեայ Ասորիքի գեղեցկակերտ, փափկադրուագ և բազմարուեստ ճարտարապետական շինութիւններն, քրիստոնէական շրջանի Վկեկոններու ինքնուրոյն կերտուածքն թէ և իանդավառեց տաղանդաւոր ուսումնասիրողը, բայց այնուհանդերձ վերջնական դատողութեամբ արտայայտուեցաւ որ, «Ասորիք մասնաւոր բան մը տուած է Բիւզանդիոնի»: Սակայն նոյն ֆրանսական զպրօցէն ելած մեր ժամանակակից յայտնի ճարտարապետներ՝ շնորհիւ իրենց կատարած խոր ուսումնասիրութեանց — ոմանք ասացին քաղաքական նկատումներով — ուժգին կերպով կառուցեան հին զաղափա-

րին թէ նոր ճարտարապետական գիւտն և գեղեցկութիւնն կը բխէ մի միայն Բիւզանդական աղբիւրէն, միւս ազգեր, ընդ որս և Հայերն, օգտուել են և հետեւող մ'եղած են անոր արուեստին: Նոյն կարծիքէն էին և են իտալական ճարտարապետներն, բայց այս տարբերութեամբ որ սոքա նոր ճարտարապետութեան խանձուրուրքն դնում են Հռոմի գետնադամբաններու մէջ, Յուստիանոսէն վեց դար յառաջ, զի անոնց մէջ գտնուած են նկարներ և քանդակներ, զորս կը համարին թէ գործ են առաջին հրեք դարերու քրիստոնէից, որոնք կոապաշտներու առէն այդ գետնադամբաններու մէջ կը ժողովէին աղօթելու, պատարագ պաշտում կատարելու, և հոն կը թաղուէին մարտիրոսաց հետ և սուկական մարդիկ:

Հռոմի գետնադամբաններու գեղեցիկ և կատարեալ օրինակներ կը գտնուին Աղեքսանդրիոյ և Ասորիքի մէջ, աւելի կանուխ քան զՀռոմայիններն: Թէպէտ տարակուսի տակ է անոնց ստուգութիւնն սակայն հայրենամուլ (chauvin) ճարտարապետներ (որոց սակի էր Յ. Ռիվոյիոս) հրով և սրով կ'աշխատին պաշտպանել և իրել վարդապետութիւն ընդունել ընել: Իսկ Հայաստանի ճարտարապետութեան մասին ոչ ոք կը մոռածէր. նոյն իսկ և ոչ ուշադրութեան առնուած էր ինչ որ գրած էին ԺԼ—ԺԹ դարերում Եւրոպական գիտնական ճարտարապետներ, որոնք Անդրիոյ և Ֆրանսայի պետութեանց ծախսով, գնացին Հայաստան ուսումնասիրելու, նկարելու մեր նախնեաց հնութիւններն, առաւելապէս Անուոյ աւերակներն և եկե-

դեցիններն, որոնք դեռ կը պահէին անա-  
ղարտ Հայկական ճարտարապետութեան  
գեղեցիկ կոթողներն: Անոնք հիւսցմունքով  
գրեցին և նկարեցին եղական ճարտարա-  
պետութեան նմոշներն, արտայայտելով  
իրենց կարծիքն և դատաստանն անոնց  
եզականութեան և առաջնութեան մի քանի  
մասանց՝ ընդհանուր ճարտարապետական  
արուեստի մէջ: Այն ճարտարապետները,  
որոց անունը այլուր պիտի տանք, և ա-  
նոնց գրածները ի նկատի չառնուեցան  
յետիններէն, վասն զի ազգասիրական պա-  
տուոյ խնդիրը կար, չսահմ ցեղական նա-  
խանձախնդրութիւն ի միասին, որով իբր  
արհամարհելի քանակութիւն մը, մոռա-  
ցութեան ուղէին տալ, եթէ անկաշկանդ  
մտքով և իր գեղարուեստի հմտութեամբ,  
Ուսցալ. Ստրիկովսկին ի տես զիտական  
աշխարհին չդնէր իւր երկհատոր ճարտա-  
րապետական պատկառելի աշխատութիւնն  
նուիրած Հայ արուեստին և ճարտարա-  
պետութեան, որով արեւմտեայց անմահից  
գունդն կը քակուէր իւր մեծամուր պա-  
տաստութենէն:

Այսօր ամենամեծ կարեւորութիւն ստա-  
ցած է գմբեթաւոր եկեղեցիներու հարցը.  
բազմահմուտ արեւելասէր գիտնականն ծա-  
ռացաւ արեւմտեան շատ մը երեւելի ճար-  
տարապետներու կարծեաց դէմ, որոնք  
ըրիտոնէական գմբեթաւոր ճարտարապե-  
տութեան միակ աղբիւրն դնում են արեւ-  
մուտք, և ոմանք յառաջ անցնելով և ոչ  
Բիւզանդականին շնորհեցին առաջնու-  
թիւնն, այլ բոլոր պատիւն վերագրեցին  
Հռոմի կուլտուրային (ոչ նախաքրիստո-  
նէականին, զի բոլորն եկամուտ ալ արեւ-  
մելքէն, Եփեսոսէն) այլ այն ճարտարա-  
պետական և գեղարուեստական նախատա-  
րերըներուն, որոնք հետզհետէ ի յայտ  
եկան և կու գան բազմախորհուրդ և բազ-  
մազգայտիք Հռոմի գետնադամբաններու  
միջէն. որոնք հանճարեղ կերպով մեկնու-  
թիւններ կը ստանան և կը դասաւորուին  
Թանգարաններու և բազմահատոր գրքերու  
մէջ: Հոն սկսած ըրիտոնէութեան առա-  
ջին դարէն, ցոյց կու տան եկեղեցւոյ ճար-

տարապետութեան արուեստին սաղմբը և  
անոր աճումը: Այդ տմայն և մթին փա-  
պուղիներու միջէն շատ մը հնութիւններ  
լոյս աշխարհ հանուեցան և կը հանուին  
օրից օր, անոնց դրսէն և օտար տեղէ եկած  
լինելուն և տեղաւորութեան պատմութիւն-  
ներով: Այդ հնութեանց շատերի երբ և  
ուստի գալը անյայտ է, բայց հնագիտա-  
կան ուսումն հին զրոյցներու և ուխտա-  
գնացների ուղեցոյցներով, կոկիկ կերպով  
դասաւորուած են շքեղ սրահներու մէջ,  
թէ և հիմնադրական են: Արեւմտեան աշ-  
աշխարհի ըրիտոնէական գեղարուեստի  
խանձարուրքն ուրեմն եղած են Ս. Կալ-  
իստոսի, Դոմիտիլլայի, Ս. Սեբաստիա-  
նոսի, վերջերս ալ Ս. Պրետեքստատի կո-  
չուած գետնադամբաններն, որոնք ոմանց  
կողմանէ կը շահագործուին գիտական մե-  
թոտներով որոշ նպատակների համար,  
ոյժ տալով տեղական զարգացումի հնա-  
բաւորութեան, ժխտելով որ և է դարի ազ-  
դեցութիւն, յայտարարելով որ Հռոմի կուլ-  
տուրան մայր և զուլա է գեղարուեստա-  
կան աշխարհի գմբեթաւոր եկեղեցիներին:

Ասոր հակառակ Ստրիկովսկու խոր և  
մանրակրկիտ հետազոտութիւններն արեւ-  
մտեան և արեւելեան գեղարուեստին, զինք  
հասուցին այն եզրակացութեան, որ կա-  
րող եղաւ հակապայքարող լեզէտին առ-  
պարէզ կարգաւ որոշելու կտրուկ կերպով  
թէ դժը է միակ աղբիւրն նոր ոճի գրմ-  
բեթաւոր ճարտարապետութեան. «Արեւ-  
մելք թէ Հռոմ». Orient ou Rome?

Այս հարցին գիտնականներէն ոմանք,  
անզիջող ամէն բանի, կառչեցան Հռոմին,  
շլացած անոր հին և նոր փառքերէն: Եղաւ  
ոմանք ալ որ համարաշխտութեան  
ուղին փորձեցին, իւրացանչիւր կողման  
շնորհելով ինչ ինչ առաւելութիւններ, ա-  
րեւելեան և արեւմտեան արուեստի խառ-  
նուրդով, ասացին, կազմուած է նոր ոճը.  
սակաւք ոմանք ալ անկեղծօրէն հակուե-  
ցան դէպ ի արեւելք և հայկական ար-  
ուեստին իսկ Ուսցալ. Ստրիկովսկին ան-  
դրդուելի հաւատքով մնաց իւր տեսակէտի  
վրայ, որ բացարձակապէս արեւելքն է

հանճարողն զմբեթաւոր եկեղեցիներին, և նոր ուսումնասիրութեան ձեռնարկեց և յաղթանակի բարոյական խրախուսանքով՝ ծանրոգութեան կէտն (point de gravitation) տարաւ դէպ ի ինքոսի և Գանն գէսի սպերն՝ կոմիտուրիտաներու, Պուտտաներու և Զրադեշտներու մտազբաղ գերերջանիկ աշխարհներն, արեւելեան ծայրագաւառներն, ուսկից կը սփռի երկրիս վրայ Արեւի առաջին լոյսն. Ex Oriente lux! Անկից նոր լոյս մը պիտի սփռի գրեթէ ծագումի վրայ:

Արեւելք եղած է միշտ խորհրդագգած աշխարհ մը մեր սպիտակ ցեղին՝ գաղափարական կրօններու, գիտութիւններու, արուեստներու, համօրէն քաղաքակրթութեանց խանձարուրքը: Նա իւր ձեռքում է բռնել արիական ազնիւ և հանճարեղ ցեղի ճակատագրի անիւր, անասնամանութեան բանալին, տիեզերական հոգւոյն սիրահար Արեւելեան հանճարն իւր կուսական թարմութեամբ՝ փարեւ է բնութեան գեղեցկութեան, և հրճուել է գաղափարական զառանցանքներու մէջ, ճշմարտութիւնն կերպարանելով իւր մէջ, իրբեւ խաղաղ ընակի հայելւոյն անդրադարձ արեւի պատկերն. ուղղակի ճշմարտութեան նայել շլացնում է նայողի աչքն, այլ երբ մարդ ամփոփուի իւր մէջն, կը զտնէ ինքնզինքն անասանման, անեզր սրտի տաճարին մէջ, հաւասար դրսի միջավայրին, ուր միտքն ու հոգին կը ճախրեն անմահութեան կամարի տակ, երկնքի լուսաւորներու պէս կապուած տիեզերական սիրոյ հետ, մինչեւ որ մահկանայններն ընկղմի անեղական կեանքի մէջ: Անոր համար աւելի զտարիւն արիականներն ձեռագործ տաճարներ չկանգնեցին արտաքին պաշտումի համար և ոչ ձեռագործ աստուածներ դրօշեցին, ոսկի հորթի պէս, որ իրենց առջեւն երթան, այլ բլրոց բարձանց և անտառախիտ ծառաց ներքեւ, մայրիներու և սօսիներու սաղարթներու տակ կը կանգնէին վէմ մի կարկառ, և անոր վրայ կ'երգումուն, աստուածալոյց հուրը կը վառէին, զոհերը կ'այրէին: Իւ-

նութեան արարիչն պէտք է հոգւով և ճշմարտութեամբ պաշտել, սակայն երեւակայութիւնն հրապուրուած զգայարանքաներէն, լուազոյնը ինչ որ կը գտնայ ըստեղծական աշխարհի մէջ, կ'ողգ անով կերպարանել և իրբեւ աւելի ընտանի վիշնորդով մը զայն պատուել: Եւ ինչ աւելի հրաշագեղ ճան զԱրեւն կարէ լինել պատկեր աներեւոյթին. նա է սկիզբն լուսոյն և կենդանութեան, տուող բանաւոր, անբան և շնչաւոր զգայուն արարածներուն բոլորին. կենդանական և բուսական թափազուրութիւնն կախուած է արեւակնէ և ենթարկուած անոր ընտանական, տարբական և ուրիշ դեռ անծանօթ զօրութեանց: Որովհետեւ Արեւի պաշտամունքն կը վերաբերէր այն տիեզերական ոգիին, որ բնութեան կենսատու ոյժն է, և ինքնին է այն իմաստութիւնն որ գաղխարճս ստեղծէր է և անյեղլի օրէնքներով կը կառավարէ, Զրադեշտական կրօնքին հաւատարիմ մնացած Պարսիկներն ոչ մահան, ոչ տաճար և դրօշեալ ունեցած չեն, մասնաւոր խորշում մ'ունէին կուրք պաշտող ազգերէն:

Նոր սովորութիւնները և աւանդութիւններն հաւատարմութեամբ կը պահուէին նաեւ արեւապաշտ Հայերու մէջ, որոնք իրենց կրօնական արարողութիւններ բաց երկնքի տակ, բլուրներու վրայ, կամ վարաւոր ծառերու տակ, բազմեցնելով, գնած, Արայի պէս, և ուրիշ հայեր, զօրդին խնկաբայր կրակի վրայ բռնած կը նստէին երկնային զօրութեանց և Արամանեկայ սօսիներուն. թագաւորներն միանգամայն քրմապետ էին: Ուստի երբ վաղարշակ պարթեւ մտաւ Հայաստան, ոչ պաշտօնական կրօնք և ոչ մեհեաններու պաշտամունք կը գտնէ երկրի մէջ, ինչպէս կը գրէ Խորենացի. «Չի ոչ կարգք ինչ լեալ աստ յայտնի, և ոչ մեհենից պաշտամունք» (Խոր. Թ. էջ 44): Յետին ժամանակներ միայն հեթանոսացած Հայ թագաւորներու ձեռքով կուպաշտութիւն մուտք գտաւ Հայաստանի մէջ. և այդ թագաւորներն յունական կամ հռոմէա-

կան դպրոցներէն էին ելած և օտար բար-  
քեր և կրօնք մտցնելուն համար բազմիցս  
կ'ամբաստանուին նախարարներէն և ժո-  
ղովուրդէն և զահրենկէց կը լինէին, որով  
կը հրաւիրէին Հոռոմայեցւոց անախորժելի  
կ'ըջամտութիւնն և բռնաբարութիւնները:  
Կռակալաշտ Արշակունիք կրօնքի միջոցաւ  
կ'ուզէին կապել զՀայաստան Հռոմի հետ,  
թերեւ Սասանեաց ղէմ թեւ թիկունք ու-  
նենալու քաղաքականութեամբ. բայց Ար-  
տաշէր արթնապէս կը հսկէր Հայ թագա-  
ւորներու շարժմանց վրայ, և թէ պատե-  
րազմի դաշտի վրայ չկարենայ վրէժ լու-  
ծիլ, դաւաճանօրէն իւր նպատակին պիտի  
հասնի:

Հայերն իրենց դժկամակութիւնն յայտ-  
նապէս հեթանոսութեան ղէմ ցուցին ան-  
դրստին Օգոստոսի ժամանակէն, երբ նորա  
որդեգիրն Կայիոս, նախարարաց ժողովի  
մէջ, մահացու հարուածն ընդունեցաւ հայ  
ձեռքէ մը, անոր յոխորտանքով իրեւ  
հպատակներու հետ խօսելու կերպին հա-  
մար, այնուհանդերձ Հռոմ կըթուած թա-  
գաւորներու միջոցաւ իւր ազդեցութեան  
նիթարկիւր էր վերին Հայաստան և մինչև  
անգամ որմզդեան հօրն շիջուցեր էին  
Քաղաքացիական մեհնի մէջ: Քանզի երբ Ար-  
տաշէր կը յաջողի սպաննել տալ հռոմա-  
յասէր Հայ արշակունի արքայն խոսրով,  
կը մտնէ Հայաստան, կը հալածէ յոյն զօր-  
քերն և կը տիրէ երկրին, և մասամբ «յա-  
ւեր դարձուցանէ», Հայ Նախարարներէն  
շատեր, հայազգի Արշակունիներու հետ ի  
Յոյն ապաւինին: Այնուհետեւ խորենա-  
ցին կը գրէ. «Իսկ Արտաշէր գեղեցկապէս  
յարդարեալ զարշարհա Հայոց, ի կարգ ա-  
ռաջին հաստատէր» այսինքն Հոռոմայեցի-  
ներէն ներմուծուած բարքերը, զգեստներ,  
քաղաքական կարգեր փոխելով, հին նախ-  
նեաց սովորութիւնները կը հաստատէ, զոր  
և Տակիրտոս իւր տարեգրութեանց մէջ ան-  
դրադարցուցեր է: Եւ յոյնպէս հին պահլաւ  
կրակապաշտ արշակունիքն որոնք թագէն  
և Այրարատն բնակելու իրաւունքէն զրո-  
կուած և հեռացուցուած էին, Արտաշէր  
«կարգէ ի նոյն տեղիս ամուրք և ոռնկօք,

որպէս էին»։ Բայց ինչ որ մեզ կը հե-  
տաքրքրէ այս է որ Հայք՝ ըստ մտաց և  
օրինակի Յունաց և Հոռոմայեցւոց կռա-  
պաշտ չէին, այլ մինչև Զորորդ դար  
Միացին արեւապաշտ այսինքն աստուա-  
ծեան աղանդաւորք, ըստ Զրադշտական  
օրինի. ասոր համար Արտաշէր. «Եւ զմե-  
հնիցն պաշտամունն առաւել եւս յոր-  
դորէ. այլ և զհարն որմզդական, ի վերայ  
բազնին՝ որ իւր Բագաւան, անշէջ հրա-  
մայէ լուցանել» (Խոր. Բ. հէ. 334): Հին  
արշակունիներէն Մնացած էր նաեւ Բագին  
մը Տրօսն Աշտիշատու մէջ, ուր մինչև  
ցըրիստոնէութիւն անշէջ կը վարէր Ակնիի  
հուրը (Արեգ-Ակնի): Այս երկու մեհնա-  
ներն թագաւորական հաստատութիւններ  
էին՝ և հոտ վառեցաւ որմզդական (Արեւի)  
կրակն, և ժողովուրդն հետեւեալ իւր  
թագաւորներու օրինակին: Ուստի դիւրաւ  
հասկանալի է որ Արտաշէր Սասանեանն,  
ինչպէս հին արեւապաշտ արշակունիքն  
ի կարգ առաջին հաստատեց, նոյնպէս  
եւ Վահուհիքն իրենց քրմութեան պաշ-  
տօնին մէջ կը վերահաստատէր, որոնք  
ոխակալուած էին Տրօսն հայ արշա-  
կունւոյ ղէմ որ զիրենց քրմութենէ զբո-  
կեց և իրենց ազնուականութեան աստի-  
տանը կարճեց. ասոնք են որ յետոյ Տըր-  
դատայ ղէմ պիտի կուրին, և միայն Ս.  
Գրիգորի համոզիչ խօսքերով պիտի ըն-  
դունին ցըրիստոնէութիւն, վասն զի Լու-  
սաւորիչ հին պահլաւ արշակունի էր և  
կը խոստոնէական կրօնքին մէջ, առաջին ե-  
կեղեցի և գլուխ ամենայն եկեղեցեաց  
կոչելով Աշտիշատունը, վերադասելով  
զՎաղարշապատունը, զոր Միածինն ոսկի  
մուրճը ի ձեռքին իշաւ հայ արշակունի  
հողի վրայ և գծեց յատակը և ցոյց առ-  
ւաւ երկնախորանանման կառուցումն: Ոսկէ  
ուռի բախումի ցնցումն՝ մինչև Աշտիշատ  
լուած չէր:

Թէ հեթանոս Հայր և Թէ ցըրիստոնեայն,  
իւրաքանչիւրն իւր դիմովն, մին՝ ստուեր,  
միւսն՝ ճշմարտութիւն, միշտ յառած ունին  
աչքերնին ղէպ ի երկիրն, ղէպ ի բար-

ձուներ, դէպ ի լեռնոր ուստի կը յուսան  
օգնութիւնս Գիշերաւաճ ծառղաճամուկ եր-  
կինքն այնքան հրապուրիչ և ներշնչից է  
բարձրագոյն անմահունակ զաղափարնե-  
րով, որքան յուզիչ և արտացոլիչ է  
ռակէվար Ակնն տիեզերաց որ կապոյտ  
կամարէն կախուած կը վառի անշէջ և  
արծարծուն աստուածութեան փառաց տա-  
նարի մէջ. արեւն իւր ամբողջութեամբ  
կ'ամփոփէ յինքն յաւիտենականութեան  
խորհուրդներն և երեւելի նկարագիր է  
իմանալի փառաց Արարչին, յորմէ հրա-  
պուրուած հայ հանճարն պիտի կերտէ  
իւր երկնաման անդրանիկ խորանն, պիտի  
վերցնէ արեւմտեան տափակ և անխմաստ

ծածըր և դնէ անոր տեղ հաշտութեան  
ծիածանի աղեղն, ոչ Մասիսու սարերու  
վրայ, այլ աւետարանական չորս սինե-  
րու վրայ, նշանակ չորեքողման աշխար-  
հի և կապէ սիրոյ պսակով իրարու հետ  
անմեկնելի էկեղեցւոյ չորս թեւերն փրկ-  
չական Նշանն, որոյ վրայ պիտի հանգչի  
ամենապայծառ վայելչութեամբ գործիքն  
աթոռն Աստուծոյ, և անոր հովանոյն տակ  
պատուանդանի վրայ ծնրադիր հաւատա-  
ցեալ Հայը պիտի ազօթէ բազկատարած  
դէպ ի Արեւելք, դէպ ի յաւիտենական և  
անեղական լոյսն. Ex Oriente lux!.

Շարունակելի

Հ. Գ. ՆԱԶԱԳԵՏԵԱՆ

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Շար. տոմս Բազմավէպ 1930 էջ 106)



Ը. Հանգամանք ընտրելոյն. — Է. Կա-  
թողիկոսօրհնէից սահմանը՝ եպիսկոպոսաց  
միջէն ընտրելու հայրապետը<sup>1</sup>, մեռեալ տառ  
մնաց: Եւ ինչպէս շարադրողէն յառաջ,  
նաեւ յետոյ կը շարունակեն ընտրել բո-  
լոր վիճակներէ: Եպիսկոպոսներէ, ինչպէս  
Արիստակէս, Վրթանէս, Դանիէլ, Յուսիկ  
Բ, Արարհամ Ա, Կոմիտաս, Ներսէս Գ,  
և մեր հայրապետաց մեծագոյն մասը:  
Երիցներէ, ինչպէս Փառէն, Սուրմակ,  
Մեղրոս<sup>2</sup>, Յովսէփ: Երբեմն ազդակի աշ-  
խարհական զասէն. ինչպէս Լուսաւորիչ,  
Յուսիկ Ա, Ներսէս, Չաքարիա Ա. Յաճախ  
վանականներէ. զոր օրինակ Արիստակէս՝  
որ անապատէն տարուեցաւ իբր Յովսա-  
նորդ, և յաջորդեց Լուսաւորչին. Յովհան-  
նէս Բ վանական թաթլոյ. Յովհաննէս

սրենական. Քրիստափոր Բ անապատա-  
կան. Սողոմոն հայր Մաքենոցաց, Մաշ-  
տոց՝ Սեւանայ, Անանիա Ա՝ Վարազայ,  
Սարգիս Ա՝ Սեւանայ; Դէոսկորոս՝ Սա-  
նահնի, և այլք: Յաճախ պատումն ալ կը  
թոյլատրէ աշխարհէ հրաժարելոց եկեղե-  
ցական կարգ առնուլ՝ երբ հարկ լինի.  
«Եթէ ի կամաց վերակացուին և ի հա-  
սարակաց կորստութեանն բռնադատեսցի,  
կ'ըսէ, յեպիսկոպոսութիւն կամ յառաջ-  
նորդութիւն այլոց և ի քահանայութիւն,  
... հաւանեսցի»<sup>3</sup>: Իմանալոցայ այս կիտին  
վրայ, որովհետեւ եպիսկոպոսօրհնէքը ճիշդ

1. Աստ՝ 112. — 2. Երէց մեռնաբերուած ս. Սահա-  
կէն. հմտ. Կարեաթ խցիքներս, 280. — 3. Յեկոյս.  
Վնիսիկ, 1898, 212.